

# ՍԱՂՄՈՍ 103

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Փառք Տիրոջն Իր ողորմությունների համար	Փառք Տիրոջն Իր ողորմությունների համար	Հիվանդությունից ապաքինվելու համար գոհություն	Աստծո սերը	Աստված սեր է
<u>MT ներածություն</u> Դավթի սաղմոսը				
103:1-5	103:1-5	103:1-5	103:1-5	103:1-2 103:3-5
103:6-14	103:6-10  103:11-14	103:6-14	103:6-14	103:6-7 103:8-10 103:11-12 103:13-14
103:15-18	103:15-18	103:15-18	103:15-18	103:15-16 103:17-18
103:19-22	103:19  103:20-22	103:19-22	103:19-22	103:19-20 103:21-22

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

### ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սա Սաղմոսների գրքում առկա ամենաբարձր աստիճանի փառաբանություն է: Սա Սաղմոս 104-ի գուգրնկերն է: Սաղմոս 103-ը ներկայացնում է Աստծուն որպես Ազատող՝ Փրկիչ (ՅԱՀՎԵ, Սաղմ. 103:1,6,8,13,17,19,20,21,22 /երկու անգամ/, մինչդեռ Սաղմոս 104-ը ներկայացնում է Աստծո ստեղծագործող գործությունը (*Էլոհիմ*, Սաղմ. 104:1,33): ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ, Դ:

Բ. Այս Սաղմոսը կարծես թե շարժվում է

1. անձնական փորձառությունից
2. դեպի հավաքական երկրպագություն
3. դեպի տիեզերական երկրպագություն

Գ. Համառոտ ուրվագիծը՝

1. Փառք Աստծուն անհատների հանդեպ Նրա սիրո համար, Սաղմոս 103:1-5
2. Փառք Աստծուն Իսրայելի հանդեպ Նրա սիրո համար, Սաղմոս 103:6-14
3. Փառք Աստծուն սահմանափակ մարդու հանդեպ Նրա անսահման սիրո համար, Սաղմոս 103:15-18
4. Թող ամեն բան փառաբանի Տիրոջը, Սաղմոս 103:19-22:

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 103:1-5**

<sup>1</sup>Օրհնի՛ր ՏԻՐՈՉԸ, ո՛վ իմ անձ,  
**ՈՒ այն ամենը, որ իմ ներսում է՝ Նրա սուրբ անունը:**  
<sup>2</sup>Օրհնի՛ր ՏԻՐՈՉԸ, ո՛վ իմ անձ, ու մի՛ մոռանա  
**Նրա բոլոր բարերարությունները,**  
<sup>3</sup>Ով ներում է քո բոլոր անօրենությունները,  
**Ով բժշկում է քո բոլոր ախտերը,**  
<sup>4</sup>Ով փրկագնում է կյանքդ ապականությունից,  
**Եվ քեզ ողորմությամբ ու գթությամբ պսակում:**  
<sup>5</sup>Ով կշտացնում է սիրտդ բարությամբ այնպես,  
**Որ երիտասարդությունդ արժվի պես նորոգվում է:**

**103:1-2, 20-22 «Օրհնի՛ր ՏԻՐՈՉԸ»** Երբ համեմատում ենք այս Սաղմոսի առաջին և վերջին խոսքերը և Սաղմ. 104:1,35-ը, ակնհայտ է, որ դրանք միասին մի ամբողջություն են ձևավորում (վեց *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ):

❖ **«Օրհնել»** Այս տերմինը (BDB 138, KB 159) օրհնությունների համար օգտագործվող երկու արմատներից մեկն է:

1. ִרְשָׁא (BDB 80) կիրառվում է 45 անգամ ՀԿ-ում և համապատասխանում է Մատթ. 5:3-10-ի «երանի» խոսքին (այսինքն՝ Երանելիները): Այն արտահայտում է երանության վիճակ (տես՝ Սաղմ. 1:1, 2:12, 32:1,2, 33:12, 34:8, 40:4, և այլն):
2. ִרְבָּר (BDB 138) կիրառվում է այստեղ (Սաղմ. 103:1,2,20,21, 104:1,35) և ավելի քան 325 անգամ ՀԿ-ում: Այն կիրառվում է՝
  - ա. ՅԱՀՎԵԻ համար, որը օրհնում է սկզբնական ստեղծագործությունը՝ Ծննդ. 1:22,28
  - բ. ՅԱՀՎԵԻ համար, որը օրհնում է Նահապետներին՝ Ծննդ. 12:1, 18:18, 22:17-18, 26:4, 28:14
  - գ. ուխտի հնազանդության անեծքի և օրհնության համար՝ 2 Օրինաց 27-28 (նաև Դևտացիների 26)
 Հիմնական արմատն ունի երկու (հավանաբար փոխկապակցված) նշանակություն՝
  - 1) ծնկել
  - 2) օրհնել

**103:1 «Ով իմ անձ»** Սա գրական ձև է, երբ հեղինակը խոսում է իր մասին (տես՝ Սաղմ. 42:5,11, 43:5, 104:1,35, 116:7): Այսկերպ մարդը դիմում է իր իսկ մտածողությանը:

❖ **«անձ»** *Nephesh* (BDB 659, KB 711-713) եբրայերեն տերմին է «կյանքի ուժի» համար: Այն կիրառվում է թե՛ մարդկության (Ծննդ. 2:7) և թե՛ կենդանական աշխարհի համար (տես՝ Ծննդ. 1:24, 2:190): Այստեղ, այն զուգահեռվում է հաջորդ արտահայտության հետ՝ «ու այն ամենը, որ իմ ներսում

է», որը ընդգծում է հեղինակի փորձը Աստծուն իր ամբողջ էությանը փառաբանելու: Տե՛ս առցանց Սաղմ. 3:2-ի գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . NEPHESH

❖ **«Նրա սուրբ անունը»** Այս Սաղմոսի մնացած մասը՝ հատկապես Սաղմ. 103:8-14, նկարագրում է Աստծո բնավորությունը: Այս Սաղմոսը օգնում է մեզ տեսնելու հավիտենական, արարիչ, փրկիչ Աստծո սրտի և մտքի իրական նկարագիրը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ (ՀԿ)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ»

**103:2 «ու մի՛ մոռանա Նրա բոլոր բարերարությունները»** ՀԿ-ում, Աստծո համար մոռանալը շատ կարևոր է, քանի որ սա խոսում է Նրա ներման մասին: Սակայն մարդկանց համար մոռանալը խոսում է նրանց ապերախտության կամ ապստամբության մասին: Ընկած մարդկության հանդեպ Աստծո բարեգթությունը երևում է 2 Օրինաց 4:9,23,31, 6:12, 8:11,14,19, 9:7, 25:19: Միայն նստել ու մտածել, թե ով է Աստված և ինչ է արել մեր համար, ճշմարիտ հավատացյալի սիրտը լցնում է ցնծությամբ:

**103:3 «Ով ներում է քո բոլոր անօրենությունները»** «Ներում է» տերմինը (BDB 699, KB 757) կիրառվում է երբայերենում միայն Աստծո ներման համար: Սաղմոս 103:11-13 ներառում է երեք նկարագրություն, որոնք պատկերում են Աստծո ներումը գրաֆիկական տերմիններով:

❖ Ուշադրություն դարձրեք ԴԵՐԲԱՅՆԵՐԻ այն շարքին, որը նկարագրում է, թե ինչու պետք է ՅԱՀՎԵԻՆ օրհնել (այսինքն՝ Նա տված օգուտները):

1. Նա ներում է քո բոլոր անօրենությունները՝ BDB 699, KB 757, *Qal*
2. Նա բժշկում է քո բոլոր հիվանդությունները՝ BDB 950, KB 1272, *Qal*
3. Նա փրկում է քո կյանքը ապականությունից /փոսից/՝ BDB 145, KB 169, *Qal*
4. Նա պսակում է քեզ ողորմությամբ ու գթությամբ՝ BDB 742, KB 815, *Piel*
5. Նա կշտացնում է քո տարիները բարությամբ՝ BDB 959, KB 1302, *Hiphil*

Այս հինգ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ շարքը ընդգրկում է կյանքը երկրի վրա և ապագա կյանքը՝ երկնքում:

❖ **«Ով բժշկում է քո բոլոր հիվանդությունները»** Երբայերեն ԳՈՅԱԿԱՆԸ՝ «հիվանդություններ» (BDB 316) և ԲԱՅԸ (BDB 317 I) կիրառվում են 2 Օրինաց 29:21-ում անեծքի իմաստով՝ ուխտի հանդեպ Իսրայելի անհնազանդության պատճառով: Այս կիրառության շնորհիվ՝ և ՀԿ-յան ևս մի քանի հատվածների, որոնք խոսում են մեղքից բժշկության մասին (այսինքն՝ հիվանդությունը որպես մեղքի նկարագրություն, տես՝ Սաղմ. 41:4, Եսայի 1:5-6, 6:10, 53:5), կասկածելի է, որ այս համարի շեշտադրությունը լինի ֆիզիկական հիվանդությունը, չնայած այն անշուշտ բովանդակում է նաև դա (տես՝ Ելից 15:26, 2 Օրինաց 32:29, Սաղմ. 147:3): Հրեաները գիտակցում էին, որ մեղքը և հիվանդությունը իրար հետ կապ ունեին (տես՝ Հակ. 5:13-18): Այստեղ այն զուգահեռ է «ներում է քո բոլոր անօրենությունները» խոսքին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

**103:4 «Ով փրկագնում է կյանքդ»** «Փրկագնել» տերմինը (BDB 145, KB 169, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) նույնն է ինչ «ազգականի փրկագնումը» կամ *go'el* (BDB 145, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, տես՝ Հոր 19:25 և Հուրթ 4-ում առկա նույն արմատն ունի): Այստեղ Աստված նկարագրված է մտերմիկ ընտանեկան տերմիններով, ինչպես Սաղմ. 103:13-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՉԳԱԿԱՆ ՓՐԿԱԳՆՈՂ

❖ **«ապականությունից / գուրից»** Սա կարող է կիրառվել ֆիզիկական կործանման իմաստով, բայց Սաղմ. 16:10-ում *Շեռ* տերմինի հետ իր գուգահեռ կապի պատճառով այն կարծես թե առնչվում է հանդերձյալ կյանքի համար հեղինակի ունեցած հույսի հետ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ): Որոշ հեղինակներ անգամ Սաղմ. 103:4բ և 5 կապում են այս համատեքստի հետ:

❖ **«Ով ողորմությամբ է քեզ պսակում»** ԲԱՅԸ (BDB 742, KB 815) կարող է նշանակել՝  
1. պսակել, թագադրել – LXX և անգլերեն թարգմանությունների մեծամասնությունը  
2. շրջապատել – JPSOA, NIDOTTE, հատոր՝ 3, էջ՝ 384:  
Երկուսն էլ այս համատեքստում հարմար են:

❖ **«գթություն»** Այս տերմինը (BDB 933) հաճախ կիրառվում է ՅԱՀՎԵԻ համար (տես՝ Ելից 33:19, 2 Օրինաց 13:17, 30:3, 4 Թագ. 13:23, Ես. 14:1, 30:18, 49:10,13, 54:8,10, 55:7, 60:10): Այն կիրառվում է Սաղմ. 102:14-ում նկարագրելու գերիների ունեցած զգացմունքները ավերակ դարձած տաճարի շուրջ (տես՝ Ողբ 3:22):

**103:5 «Ով կշտացնում է սիրտդ/քո տարիները բարությամբ»** Սա շատ դժվար թարգմանվող համար է երբայերենի «տարիներ» տերմինի անորոշության պատճառով:

1. բառացի այն նշանակում է «գարդեր» (BDB 725):
2. Քինգ Ջեյմս թարգմանության «բերան» խոսքը ակնհայտորեն ճիշտ չէ:
3. ASV թարգմանությունը Սեպտուագինտայի և Վուլգատայի հետ միասին տալիս են «ցանկություն», որը կարծես թե բնօրինակ տերմինից բխող իմաստ ունի:
4. Արդի շատ թարգմանություններ կիրառում են տեքստային շտկումներ ներկայացնելով կյանքի հասկացությունը կամ կյանքի առաջնահերթության գաղափարը (տես՝ NEB, RSV, TEB և JPSOA):
5. AB (Մայքլ Դահուդ, էջ՝ 26) դիտարկում է այս խոսքը որպես հավիտենականությունը նկատի առնող (այսինքն՝ երկնքում Աստծո հետ կյանքը):
6. UBS տեքստային նախագիծը «գարդեր» խոսքը գնահատում է “B” (ինչ-որ չափով կասկածելի):  
ա. «քո գարդերը/գարդարանքը» - 7175 BDB 725, KB 791  
բ. քանի որ դու այդպիսին ես - 7175 , BDB 723, KB 786:

❖ **«այնպես որ երիտասարդությունդ արծվի պես նորոգվում է»** «Արծվի» գաղափարը որոշ մեկնաբանների համար պատճառ է եղել այս համարը դիտարկել երկու տարբեր կերպ՝

1. իրականում վերաբերում է արծիվների հզոր ուժին (տես՝ Ես. 40:31)
2. փյունիկի առասպելական ակնարկին է վերաբերում. մի թռչուն, որը մեռնելուց հետո վերածնվում է (տես՝ RSV թարգմանությունը, հավանաբար՝ Հոր 29:18):
3. արծիվների փետրատվելը, որպեսզի նոր փետուրներ աճեն (NET Աստվածաշունչը)

«Արծիվ» (BDB 676) թարգմանված տերմինը կարող է վերաբերել արծվի կամ անգղի: ՅԱՀՎԵԻ ողորմության և գթության մասին այս համատեքստում «արծիվը» լավագույն ընտրությունն է (տես՝ Ելից 19:4, 2 Օր. 32:11, Ես. 40:31):

«Նորոգվել» (BDB 293, KB 293) ԲԱՅԸ հազվադեպ է (տես՝ 1 Թագ. 11:14, 2 Մնաց. 15:8, 24:4, 12, Հոր 10:17, Ես. 61:4, Ողբ 5:21): Սաղմոսներում կիրառվում է միայն երեք անգամ:

1. Սաղմ. 51:10 – հաստատուն հոգի նորոգիր իմ ներսում (*Piel* ԱՆԿԱՏԱԲ)
2. Սաղմ. 103:5 – արծվի պես նորոգված (*Hithpael* ԱՆԿԱՏԱԲ)
3. Սաղմ. 104:30 – Դու նորոգում ես երկրի դեմքը (*Piel* ԱՆԿԱՏԱԲ)

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 103:6-14**

**ՏԵՐՆ արդարությամբ ու իրավունքով է գործում**

**Բոլոր զրկյալների հանդեպ,**

**7<sup>Ե</sup>ա Իր ճանապարհները ծանուցեց Մովսեսին,**

**Իր արարքները՝ Իսրայելի որդիներին:**

<sup>8</sup>Բարեգույթ ու ողորմած է ՏԵՐԸ,

**Ուշ բարկացող ու առատ՝ ողորմությամբ:**

<sup>9</sup>Նա միշտ չի հանդիմանի, ո՛չ էլ հավիտյան ոխ կպահի:

<sup>10</sup>Նա մեր մեղքերի համեմատ չի վարվել մեզ հետ,

**Ու մեր անօրենությունների համեմատ չի հատուցել մեզ:**

<sup>11</sup>Այլ, որքան բարձր է երկինքը երկրից,

**Այնքան մեծ է Իր ողորմությունը Իրենից վախեցողների վրա:**

<sup>12</sup>Որքան արևելքը արևմուտքից հեռու է,

**Այնքան հեռացրել է մեզնից մեր հանցանքները:**

<sup>13</sup>Ինչպես որ հայրն է գթում իր որդիներին,

**Այնպես էլ ՏԵՐՆ է գթում Իրենից վախեցողներին:**

<sup>14</sup>Քանի որ գիտե մեր կազմվածքը,

**Հիշում է, որ մենք հող ենք:**

**103:6,7 «ՏԵՐՆ արդարությամբ է գործում»** «Արդար գործեր» տերմինը կիրառվում է ՀԿ-ում երկու ճանապարհով՝

1. նկարագրելու Աստծո սրբությունը

2. նկարագրելու Աստծո փրկության գործերը (այսինքն՝ ազատագրումը)

Կարծես թե այս երկու համարներում մենք ունենք ելիցի և անապատում դեգերելու դեպքերի նկարագրություն: Ուստի սա եռակի գոհություն է Աստծո շնորհքի գործերի՝

1. Եզիպտոսից ազատագրման

2. Իրեն Մովսեսին հայտնելու

3. անապատում դեգերելու ժամանակ Իր ժողովրդի հանդեպ համբերության:

❖ **«իրավունք է գործում բոլոր զրկյալների հանդեպ»** Նմանօրինակ տեքստերի մեկնաբանության երկու կերպ կա՝

1. Աստված հոգ է տանում թույլի, աղքատի և անգորի համար (այսինքն՝ Ելից 22:22-24, 2 Օրինաց 10:17-19, Սաղմ .68:5):

2. Քանի որ ՀԿ-ը դիտարկում է բարգավաճումը որպես Աստծո բարեհաճության նշան, հաճախ տրամաբանական հետևությունն այն էր, որ Նա մերժել էր մյուսներին իրենց մեղքերի պատճառով (այսինքն՝ Հոր, Սաղմոս 73), սակայն հնարավոր է տեսնել Աստծո նրանց հանդեպ պարբերաբար կատարված սիրո խոստովանությունը որպես գրական կերպ ցույց տալու՝ հաստատելու Իր սերն ու հոգածությունը բոլորի հանդեպ:

**103:7 «Նա Իր ճանապարհները ծանուցեց Մովսեսին»** «Ճանապարհներ» վերաբերում էր Աստծո հայտնությանը (տես՝ 2 Օր. 32:2-4, Սաղմ . 18:30, 138:2,5) կամ Աստծո փրկագործությունները (տես՝ Սաղմ,67:2, 77:13-14, 145:17): ՅԱՀՎԵՆ Իրեն հայտնեց Մովսեսին, տես՝ Ելից 19-20, 33:13, Սաղմ . 99:7: ՀԿ-ը ներշնչված հավիտենական հայտնություն է (տես՝ Մատթ . 5:17-19), սակայն պետք է հիշել, որ Հիսուսը մեծագույն հայտնությունն է (տես՝ Մատթ .5:21-48): Նա է Սուրբ Գրքի միակ ճշգրիտ մեկնաբանը: Նա է Տերը Սուրբ Գրքի: Մովսեսական հայտնությունը դեռևս գործում է սրբագործման, բայց ոչ արդարացման հարցում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՊՈՂՈՍԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՆԵՐՇՆՉԱՆՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

❖ **«Նրա ճանապարհները»** Սա ՅԱՀՎԵՒ հայտնությունը նկարագրելու համար կիրառվող մի քանի տերմիններից մեկն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍԾՈՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ

**103:8 «Բարեգույթ ու ողորմած է ՏԵՐԸ, ուշ բարկացող ու առատ՝ ողորմությամբ»** Սա Աստծոն էությունը բնութագրող շարքում առաջին արտահայտությունն է: Այն կարծես թե ակնարկում է Ելից 34:6,7: Աստծո այս հատկանիշները Սուրբ Գրքում նորից ու նորից հաստատվում են (տես՝ Թվոց 14:18, 2 Օր. 4:31, Նեեմ. 9:17, Սաղմ. 86:15, 145:8, Հովել 2:13, Հովնան 4:2):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍԾՈՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ (ՀԿ)

**103:9** Երբ կարդում ենք համար 9-ը անգլերեն թարգմանության մեջ, այնպիսի տպավորություն է, որ կարծես Աստված միշտ չի համբերելու ընկած մարդկությանը, սակայն սա երբայերեն դարձվածք է, որն ունի ճիշտ հակառակ իմաստը (տես՝ Երեմ. 3:12): Նա միշտ համբերությամբ է վերաբերվելու Իր հատուկ ստեղծագործությանը (տես՝ Ծննդ. 6:3, Ես. 57:16):

❖ «Հանդիմանել» տերմինը (BDB 936, KB 1224, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) մի տերմին է, որը վերաբերում է օրինական մեղադրանքներին (տես՝ Երեմ. 3:5,12): Աստծո սիրտը միշտ պատրաստ է վերադառնալու մեզ, երբ մենք կվերադառնանք Իրեն (տես՝ Հակոբոս 4:8):

**103:10 «Նա մեր մեղքերի համեմատ չի վարվել մեզ հետ ու մեր անօրենությունների համեմատ չի հատուցել մեզ»** Հավատարիմ հետևորդները չեն պատժվում իրենց մեղքի համեմատ, ոչ էլ պարզևատրվում իրենց ջանքերի հիման վրա: Այս համարը ըստ երևույթին շարունակում է Սաղմ. 103:9-ի միտքը, և Իսրայելը շատ լավ գիտեր այս ճշմարտությունը:

**103:11 «Այլ որքան բարձր է երկինքը երկրից»** Սա երեք պատկերներից մեկն է, որը բնութագրում է Աստծո անսահման շնորհքը:

«Երկինքներ» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ-ՆԵՐ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔ: Այս նույն արտահայտությունը վերաբերում է Աստծո գործին Եսայի 55:9-ում:

❖ «Իրենից վախեցողների վրա» ԲԱՅԸ (BDB 431, KB 432, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) արտահայտում է «հարգանք», «ակնածանք»: Այս արտահայտությունը հավատարիմ հետևորդների համար պարբերաբար կրկնվող հատկանիշ է (տես՝ Սաղմ. 15:4, 25:12, 14, 103:13, 118:4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)

**103:12 «Որքան արևելքը արևմուտքից հեռու է»** Երբայերեն «արևելք» և «արևմուտք» բառերի ստուգաբանության արմատը վերաբերում է արևի բարձրանալուն և մայր մտնելուն: Ինչպես որ երկինքների բարձրությունը հնարավոր չէ համեմատել Աստծո շնորհքի հետ, այնպես էլ, երկրի տարածությունը մի հորիզոնից մինչև մյուս հորիզոնը չի կարող համեմատվել Աստծո շնորհքի հետ: Երբ սա համեմատում ենք Եսայի 38:17, 44:22 և Միքիա 7:19-ի հետ, Աստծո շնորհքի ամբողջական փոխաբերական ազդեցությունը աննկարագրելի է:

❖ «այնքան հեռացրել է մեզնից մեր հանցանքները» «Հեռացրել» տերմինը (BDB 934, KB 1221) նշանակում է «ոչ մի կապ չունի» մեր հետ, որը լուսաբանում է մեղքի պատժի և հանցանքի լիարժեք հեռացումը գթառատ Աստծո կողմից:

Սա ՀԿ-յան շնորհքով արդարացումն է: Երբ Աստված ներում է (Իր էության շնորհիվ), Նա մոռանում է (տես՝ Ես. 1:18, 38:17, 43:25, 44:22, Միքիա 7:19): Մեր անցյալը ներված է և մոռացված:

Այժմ մենք պետք է աստվածահաճո կյանք ապրենք ապագայում, որպես ՅԱՀՎԵԻ հանդեպ Իր ներման և մոռանալու համար մեծ երախտագիտության նշան: Շատ հավատացյալներ մտավոր կարող են հաստատել Աստծո ներումը, սակայն երբեք չեն յուրացրել Աստծո կողմից մեր մեղքերը մոռանալու հասկացությունը:

Ուշադրություն դարձրեք, որ Սաղմ. 103:12-13-ում երկու բառեր կան, որոնք սկսվում են միևնույն երրայերեն տառով Դ , և սա երկու անգամ է հանդիպում: Սա ակնհայտ հնչյունային խաղ է (ինչպես որ եռակի յ հնչյունային խաղ է Սաղմ. 103:10 և 11-ում):

**103:13 «Ինչպես որ հայրն է գթում իր որդիներին»** Այստեղ կրկին ունենք մեկ այլ ընտանեկան փոխաբերություն, որը բնութագրում է Աստծո սերը (տես՝ Ելից 4:22, 2 Օր. 1:31, 8:5, Սաղմ. 27:10, Առակ. 3:12, Եսայի 49:15, 63:16, 64:8, Երեմ. 31:9, Ովսեա 11:1, Մաղ. 1:6): Սա հավանական հիմքն է, որից Հիսուսն օգտվեց Աստծուն նկարագրելով որպես Հայր (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՅՐ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍԾՈՆ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ):

Այս համարը կիրառվում էր Հուդայականության մեջ Քավության Օրը (տես՝ Ղևտացիների 16): Այն մեջբերվում էր, երբ քավության երկու նոխագներից մեկին հրում էին ժայռից ցած (այսինքն՝ ճամբարից մեղքը հեռացնում էր):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ՏՈՆԵՐԸ, I Ե #2:

❖ **«այնպես էլ ՏԵՐՆ է գթում Իրենից վախեցողներին»** Պետք է հիշել, որ չնայած Աստծո նախաձեռնող շնորհքը սուրբգրային հավատքի բանալին է, Նա պահանջում է, որ մարդկանց կողմից պատասխան տրվի առաջին անգամ և շարունակական (տես՝ Սաղմ. 103:17,18 մարդկության կողմից պայմանական այս կողմի եռակի շեշտադրության համար: Տես ամբողջական գրառումը՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ):

«Վախենալ» ԲԱՅԸ (BDB 431, KB 432, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) անդրադառնում է նրանց, ովքեր ակնածում են Աստծուց հավատքով և հավատարմությամբ: Տես ամբողջական գրառումը «վախի» թե՛ դրական և թե՛ բացասական կողմերի շուրջ Սաղմ. 15:2-5-ում: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ):

**103:14 «Քանի որ Նա գիտե մեր կազմվածքը»** Սա երրայերեն *yetzer* (BDB 428) տերմինն է, որը նշանակում է «մտադրություն»: Աստված գիտի մեր մտքերը և չնայած դրան սիրում է մեզ (տես՝ Ծննդ . 6:5, 8:21): Հետաքրքիր է, որ ընդհանրապես ռաբբիները չէին հավատում առաջին մեղքին (Ծննդոց 3), այլ պաշտպանում էին երկու *yetzer*-ի տեսությունը (այսինքն՝ բարի և չար մտադրության): Նրանք ասում էին, որ ամեն անձ ունի սև և սպիտակ շուն իր ներսում, և որին որ շատ ենք կերակրում, այն էլ ավելի է մեծանում և ուժեղանում: Սա շեշտադրություն է մարդու պատասխանատվության վրա, որը իհարկե կես-նշարտությունն է (ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱԾՎԵՏՈՒ ԼԻՆԵԼՈՒ ՏԱՐԻՔԸ):

NRSV և JPSOA Սաղմ.103:14ա-ում գտնվող ԲԱՅԸ դիտարկում են որպես Ադամի ստեղծագործությանը (Ծննդ. 2:7, 3:19) կամ ամբողջ մարդկությանը վերաբերող (Սաղմ. 139:15): TEV և NJB ենթադրում են, որ այն վերաբերում է մարդկանց կազմության նյութին (այսինքն՝ կավ, հող, տես՝ Ծննդ. 2:7):

❖ **«հիշում է, որ մենք հող ենք»** Այս նկարագրությունը ակնարկում է սկզբնական ստեղծագործությանը (տես՝ Ծննդ. 2:7, 3:19, Հոր 34:15, Սաղմ. 104:29, Ժող. 3:20, 12:7): Այն խոսում է մարդու փխրունության մասին (տես՝ Հոր 10:9, Սաղմ. 78:39), որը ներկայացնում է հաջորդ բաժինը՝ Սաղմ. 103:15-18:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 103:15-18**

**<sup>15</sup>Մարդու օրերը խոտի պես են,**

**Նա ծաղկում է ինչպես դաշտի ծաղիկը.**

**<sup>16</sup>Քամին նրա վրայով անցնելուն պես ոչնչացնում է,**

**Եվ այլևս դրա տեղը չի ճանաչում դրան:**

**<sup>17</sup>Բայց ՏԻՐՈՉ ողորմությունը հավիտյանս հավիտենից**

**Իրենից վախեցողների վրա է,**

**Ու Նրա արդարությունը՝ որդիների որդիների վրա.**

**<sup>18</sup>Նրանց վրա է, որ պահում են Նրա ուխտը,**

**Հիշում ու կատարում են Նրա պատվիրանները:**

**103:15,16 «Մարդու օրերը խոտի պես են»** Այս պարբերությունը (Սաղմ. 103:15-18) շեշտադրում է Աստծո հավիտենականությունը և մարդու աննշան վախճանը: Այս նույն նկարագիրը կիրառվում է ՀԿ-ում մի քանի անգամ (տես՝ Հոր 14:1,2, Սաղմ. 90:5,6, Ես. 40:6-8) և ՆԿ-ում (տես՝ 1 Պետ. 1:24-25):

**103:17-18** Այս համարները պարունակում են երեքպատիկ շարք, որը նկարագրում է Աստծո նախաձեռնող սիրուն մարդկության կողմից արձագանքելու անհրաժեշտությունը (այսինքն՝ մարդու ազատ կամքը):

1. Սաղմ. 103:17, Նրանից վախեցողները
2. Սաղմ. 103:18, Նրա ուխտը պահողները
3. Սաղմ. 103:18, Նրանք, որ հիշում ու կատարում են Նրա պատվիրանները

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀՇԷԼ

**103:17 «Տիրոջ ողորմությունը/բարեգթությունը»** Սա վերաբերում է Նրա ուխտի հավատարմությանը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*hesed*)

❖ **«հավիտյանս հավիտենից»** Սա *o'lam*-ի կրկնապատիկն է (BDB 761, տես՝ Սաղմ. 90:2):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (*o'lam*)

❖ **«ու Նրա արդարությունը՝ որդիների որդիների վրա»** Հնգամատյանի որոշ հատվածներից կարդում ենք, որ Աստված ուղարկում է հայրերի անօրենության պատիժը երեխաների վրա՝ մինչև երրորդ ու չորրորդ սերունդը (տես՝ Ելից 20:5, 2 Օրինաց 5:9): Սակայն, նրանք, ովքեր սիրում են Նրա, Նա ուղարկում է Իր օրհնությունները մինչև հազարերորդ սերունդը (տես՝ 2 Օրինաց 5:10, 7:9): Հավատքն ու հավատարմությունը ՅԱՀՎԵԻՆ փոխանցվում է ընտանիքների միջոցով (տես՝ 2 Օր. 4:9, 6:7, 20-25, 11:19, 32:46), ինչպես մեղքը և ապստամբությունը:

**103:18 «կատարում են»** Հնազանդությունը առանցքային դեր է խաղում ուխտի մեջ: Ինքնիշխան Աստված նախաձեռնում է այն և սահմաններ գծում, սակայն պահանջում է, որ Իր ժողովուրդը հնազանդվի (տես՝ 2 Օր. 4:2,6,9,40, 5:10,12, 29, 32, 6:2,3,17,25, 7:8,9,11,12): Աստծո խոսքը լսելու և ապա դրան հնազանդվելու հասկացությունը երբայերենում *Shema* (BDB 1033, տես՝ 2 Օրինաց 4:1, 5:1, 6:3,4, 9:1, 20:3, 27:10, 33:7) բառն է: Հիսուսն այս նույն հայտարարությունն արեց Ղուկաս 6:46-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀՇԷԼ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. SHEMA



**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՀՄՈՍ 103:19-22**

**<sup>19</sup>ՏԵՐՆ Իր գահը երկինքներում հաստատեց .**

**Նրա թագավորությունը տիրում է ամենքի վրա:**

**<sup>20</sup>Օրհնեցե՛ք ՏԻՐՈՉԸ, ո՛վ Նրա հրեշտակներ,**

**Որ գործությամբ գերազանց եք,**

**Որ Նրա Խոսքի ձայնը լսելով՝ կատարում եք Նրա հրամանները:**

**<sup>21</sup>Օրհնեցե՛ք ՏԻՐՈՉԸ, ո՛վ Նրա բոլոր գորքեր,**

**Նրա կամքը կատարող սպասավորներ:**

**<sup>22</sup>Օրհնեցե՛ք ՏԻՐՈՉԸ, ո՛վ Նրա բոլոր գործեր,**

**Նրա տերության մեջ ամենուրեք .**

**Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ:**

**103:19** «Նրա թագավորությունը տիրում է ամենքի վրա» «Ամենք» տերմինը անդրադարձ է տիեզերքին՝ Աստծուն արժանի ձևով փառաբանելու: Նա՛ է ստեղծել այն, և այն փառաբանում է Նրան, թե՛ շնչավորները, և թե՛ անշունչները:

**103:20** «Օրհնեցե՛ք ՏԻՐՈՉԸ, ով Նրա հրեշտակներ» Մա նկարագրում է Աստծո անձ հանդիսացող, գիտակից ծառաներին: Որոշ քննարկումներ են եղել «Նրա գորքերը» (BDB 838) տերմինի շուրջ՝ Սաղմոս 103:21-ում, որը ոմանք դիտարկում են որպես հրեշտակների մեկ այլ խումբ: Այս տերմինը սովորաբար նշանակում է «գորք», սակայն Սաղմոս 103:22-ում անշունչ փառաբանության պատճառով, ոմանք «Նրա գորքերը» դիտարկում են որպես աստղագարդ երկինքները (տես՝ 2 Օր. 4:19, Սաղմ. 19:1-6):

Ուշադրություն դարձրեք, որ ինչպես հավատարիմ հետևորդները պետք է հնազանդվեն ՅԱՀՎԵԻՆ, այնպես էլ հրեշտակները (տես՝ Եբր. 1:6-14):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

**103:22** Ամբողջ բնությունը, կենդանիները, մարդիկ և հրեշտակները փառաբանեն Աստծուն (տես՝ Փիլ. 2:9-11): Օրհնության և փառաբանության է արժանի ամենքի Արարիչը (Սաղմոս 104) և Փրկիչը (Սաղմոս 103): Ես անհամբեր սպասում եմ, թե երբ եմ այս մեծ երգչախմբի մասը կազմելու (տես՝ Հայտն. 5:9-14):

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Մա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞րն է այս Սաղմոսի առանցքային ճշմարտությունը:
2. Ինչպե՞ս է այս Սաղմոսը կապված Սաղմոս 104-ի հետ:
3. Արդյո՞ք բժշկությունը հատուկ խոստում է Քրիստոսի քավության մեջ (տես՝ Ես. 53:5):
4. Ուխտը պայմանակա՞ն է, թե անվերապա՞հ: Բացատրե՛ք: